ԿԱՐԳ

Մատակարարների ապրանքների ընտրության, առևտրային ցանցում դրանց ցուցադրության և մատակարարի հետ հարաբերությունների դադարեցման վերաբերյալ

Սույն կարգը հիմված է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների վրա և պարտադիր է մատակարար հանդիսացող տնտեսավարող սուբյեկտների համար՝ ապրանքներ մատակարարելու առաջարկ ներկայացնելիս:

Սույն կարգում օգտագործվող հասկացությունները՝

Վեգա ընկերություն՝ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ

Մատակարար՝ ՀՀ տարածքում գործող և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գրանցում ստացած տնտեսավարող սուբյեկտ

Ապրանքներ՝ վերավաճառքի համար նախատեսված ապրանքները

Պայմանագիր՝ Մատակարարի հետ կնքվող ՀՀ օրենսդրության պահանջներին բավարարող գրավոր պայմանագիր

Կայք՝ www.vega.am:

Վեգա ընկերությունը՝ հանդիսանալով շահույթ հետապնդող կազմակերպություն, մատակարարների ընտրությունը կատարելիս հիմվում է շուկայական տնտեսության գործող սկզբունքների վրա՝ հաշվի առնելով առկա օրենսդրության պահանջները: Մատակարարի ընտրությունը կատարելիս հաշվի են առնվում անհրաժեշտ շահութաբերության ապահովման, խտրականության բացառման, Ընկերության բարի համբավի չխաթարման, հնարավոր նոր գործընկերների փոխշահավետ համագործակցության, սպառողների համար առավել հարմարավետության ապահովման սկզբունքները:

Վեգա ընկերության մատակարար դառնալու համար տնտեսավարող սուբյեկտները կարող են դիմել իրենց նախաձեռնությամբ կամ ի պատասխան Վեգա ընկերության համապատասխան համագործակցության առաջարկի։

Վեգա ընկերությունը նոր մատակարարի ընտրությունը կատարելիս հիմք է ընդունում հետևյալ նվազագույն չափանիշները՝

- Վեգա ընկերության կողմից հրապարակված ցանկում ընդգրկված ապրանքատեսակի առկայությունը,
- Օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ գրանցված լինելը,
- Օրենսդրությամբ սահմանված ապրանքի որակին, մակնշմանը և փաթեթավորմանը ներկայացվող պահանջների լիարժեք բավարարումը,
- Լուծարման գործընթացում չգտնվելը,
- Պետական մարմինների կողմից հայտնաբերված այնպիսի խնդիրների բացակայությունը, որոնք վերաբերում են առաջարկող ապրանքների որակին, մատակարարի գործունեությանը այն դեպքում, եթե առկա են ռիսկեր Վեգա ընկերության բարի համբավի վրա դրա բացասական ազդեցության վերաբերյալ,
- Տեղեկատվական բաց աղբյուրներում մատակարարի և (կամ) նրա կողմից առաջարկվող ապրանքների վերաբերյալ այնպիսի խնդիրների բացակայությունը, որոնք վերաբերում են առաջարկող ապրանքների որակին, գործընկերների նկատմամբ պարտավորությունների չկատարմանը և առհասարակ տվյալ մատակարարի գործունեությանը այն դեպքում, եթե առկա են ռիսկեր Վեգա ընկերության բարի համբավի վրա դրա բացասական ազդեցության վերաբերյալ,
- Մատակարար ընկերության կողմից առաքումների անընդհատության համար բավարար քանակությամբ ապրանքների մատակարարման հնարավորությունը,
- Երաշխիքային սպասարկում ունեցող ապրանքատեսակների համար դրա իրականացման նյութատեխնիկական և մասնագիտական բավարար կարողությունների առկայությունը,
- Գնային առումով մրցունակ առաջարկի առկայությունը,

- Առաջարկվող ապրանքների իրացվելիությունը։

Վեգա ընկերության նոր մատակարար դառնալու համար Մատակարարը ներկայացնում է գրավոր առաջարկ matakarar@vega.am էլեկտրոնային հասցեին՝ pdf ձևաչափով ֆայլի տեսքով, որը պետք է ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում) լինի Մատակարարի ղեկավարի լիազորություններ ունեցող անձի կողմից։ Առաջարկը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը՝ ըստ ստորև նշված հերթականության.

- Մատակարարի անվանում,
- Իրավաբանական հասցե,
- Գործունեության հասցե,
- Այն հարկման ռեժիմը, որում գտնվում է մատակարարը՝ ԱԱՀ վճարող կամ այլ։
- Ապրանքի անվանում,
- Ապրանքի բնութագիրը՝ ըստ մակնշման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջների,
- Օգտագործման (շահագործման) պայմաններ (առկայության դեպքում),
- Ապրանքի պահման պայմաններ,
- Ապրանքի գին,
- Ապրանքների մատակարարման առավելագույն ժամկետը՝ պատվերը ստանալու պահից սկսված,
- Ապրանքը պատվիրելու եղանակ,
- Ապրանքների մատակարարման առավելագույն քանակը ըստ ներկայացված գնի,
- Պատվերի կատարման համար ապրանքների մատակարարման նվազագույն քանակները,
- Ապրանքների պիտանիության ժամկետում չիրացման, ինչպես նաև Վեգա ընկերությունում պահպանման պայմանների կատարման դեպքում դրանց ապրանքային տեսքը կորցնելու, ապրանքների՝ տեխնոլոգիապես հնացած լինելու դեպքում դրանց վերադարձի պայմանները։

- Երաշխիքային սպասարկման ենթակա ապրանքների դեպքում՝ դրանց սպասարկման պայմանները, այդ թվում՝ նորոգման և փոխանակման առավելագույն ժամկետը։
- Վեգա ընկերության այն հասցեները, որոնցում ցանկանում է մատակարարել ապրանքները։
- ԵԱՏՄ համապատասխանության սերտիֆիկատ,
- Լաբորատոր փորձաքննության արդյունքների մասին փաստաթղթերի պատճենները,
- Որակի համապատասխանության այլ փաստաթղթեր (առկայության դեպքում),
- Ոչ հայկական ապրանքների դեպքում՝ ծագման երկրի սերտիֆիկատ,
- Ապրանքի փաթեթավորումը բոլոր կողմերից ցուցադրող պատկերավոր գունավոր լուսանկարներ,
- Ապրանքի չափսեր՝ միլիմետրի չափման միավորով հաշվարկված,
- Ակնկալվող վաճառքի ծավալները հաշվարկված բնաիրային չափման միավորով՝ ամսական կտրվածքով՝ ըստ հասցեների (առկայության դեպքում)։
- Այլ տեղեկատվություն՝ ըստ Մատակարարի ցանկության։

Ստացված գրավոր առաջարկը դիտարկվում է Վեգա ընկերության կողմից՝ օրենսդրությամբ սահմանված ժամկետում։

Որոշում կայացնելիս Վեգա ընկերությունը հիմնվում է հետևյալ գործոնների վրա.

- Մատակարար դառնալու նվազագույն պայմանների բավարարումը
- վաճառքի համար անհրաժեշտ տարածքի մեծություն,
- պահեստավորման համար անհրաժեշտ տարածքի մեծություն,
- ապրանքի գինը և շահութաբերության մակարդակը,
- ապրանքի որակը,
- փաթեթավորման որակը,
- մատակարարվող ապրանքների տեսականին,
- ապրանքի սեզոնային լինելը և առաջարկի ներկայացման ժամանակահատվածը,
- ապրանքային նշանի հանրաճանաչ լինելը,

- մատակարարի բարի համբավը,
- ապրանքի շրջանառելիության ծավալները՝ հնարավոր մատակարարման դեպքում,
- երաշխիքի առկայությունը,
- ապրանքի վերադարձի կամ փոխանակման պայմանները և դրանց դիմաց վճարման ժամկետները,
- ապրանքի որակին ներկայացվող փաստաթղթերի առկայությունը,
- առաջարկվող գնով մատակարարվող ապրանքների նվազագույն քանակը և ժամկետները,
- տվյալ ապրանքատեսակով հագեցվածության մակարդակը,
- ավելացված արժեքի հարկ վճարող լինելը,
- շուկայում մատակարարի գործունեության ժամանակահատվածը,
- Վեգա ընկերության ֆինանսական վիճակը,

Ներկայացված առաջարկի հիման վրա Վեգա ընկերությունը matakarar@vega.am էլեկտրոնային հասցեից օրենսդրությամբ սահմանված ժամկետում մատակարարին ուղարկում է գրություն՝ ներկայացված առաջարկը հաստատելու կամ մերժելու վերաբերյալ՝ ապահովելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Դրական որոշման առկայության պարագայում Մատակարարի հետ կնքվում է գրավոր պայմանագիր:

Վեգա ընկերությունը վաճառվող ապրանքների ցուցադրությունը կատարում է խանութ-սրահներում, ինտերնետային կայքում և սոցիալական ցանցերում:

Վեգա ընկերությունը ապրանքի ցուցադրությունը կազմակերպում է խտրականության բացառման սկզբունքով՝ նպատակ ունենալով ապահովել իրացման առավել բարձր ցուցանիշներ և սպառողների պահանջմունքների բավարարման և գոհունակության առավել բարձր մակարդակ: Ապրանքների ցուցադրությունը կազմակերպելիս հաշվի են առնվում հետևյալ գործոնները

- ապրանքանիշի ճանաչվածության աստիճան

- ապրանքի տեսակ, խումբ
- շահութաբերության մակարդակ
- ապրանքի իրացման ծավալներ
- նորարարության մակարդակ
- կիրառման ոլորտ
- ապրանքի գին
- ապրանքի գույն
- ապրանքի չափսեր
- տաղավարների չափսեր
- գնորդի տեսանելիություն և հասանելիություն
- հակահրդեհային անվտանգության պահանջներ

Վեգա ընկերությունը ապրանքների ցուցադրության համար Մատակարարներից գումարներ չի ստանում։

1. Վեգա ընկերությունը մատակարարի հետ հարաբերությունները կարող է դադարեցնել հետևյալ դեպքերում՝

- Պայմանագրի ժամկետի լրացում
- Հիմնավոր տեղեկատվությունն մատակարար դառնալու նվազագույն չափանիշների անհամապատասխանության վերաբերյալ,
- Կնքված մատակարարման պայմանագրի պայմանների չպահպանում,
- Տվյալ մասնաճյուղի աշխատանքների կասեցում կամ դադարեցում,
- Ապրանքի որակի, մակնշման և փաթեթավորման վերաբերյալ թերությունների առկայություն,
- Ապրանքների իրացման ոչ բավարար ծավալների առկայություն։